«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ – Թեստ: Թեստի տեսակները և կառուցման սկզբունքները: Հայտորոշիչ թեստ

ԱՌԱՐԿԱ - Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ - Նաիրա Սամվելի Եղիազարյան

ՄԱՐԶ - Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - (Վաղարշապատի N12 հիմնական դպրոց)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3
ԳԼՈՒԽ 1.Թեստ: Թեստի տեսակները ----------5
ԳԼՈՒԽ 2.Թեստ կազմելու սկզբունքները ----------12
ԳԼՈՒԽ 3.Հայտորոշում ----------15
Եզրակացություն ----------20
Գրականության ցանկ ----------21

Ներածություն

Գնահատման նոր համակարգի ներդրմանը զուգահեռ ուսումնառության արդյունքների ստուգման նպատակով ուսուցիչների պրակտիկայում ավելի հաճախ սկսեցին կիրառել թեստեր:

Թեստը սովորողների գիտելիքներն ու հմտությունները ստուգելու և կիրառելու միջոց է: Դրանք կիրառվում են ուսումնական նյութի յուրացման և իմացության, ինչպես նաև որոշակի կարողությունների ձևավորման համար: Այն կօգնի ուսուցիչներին մշտական հետևողականություն դրսևորելու յուրաքանչյուր աշակերտի առաջընթացի կամ դժվարությունների հարցում և հնարավորություն կտա մինչև միավորային գնահատմամբ ստուգումներ անցկացնելը, ժամանակին շտկողական աշխատանքներ վարելու:

Ըստ նպատակադրման թեստերը լինում են՝

- Առաջադիմության, որոնք հանձնարարվում են նյութի ամփոփման ժամանակ: Յուրաքանչյուր կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին:
- Ուսուցողական կամ ձևավորող թեստեր, որոնք օժանդակում են գիտելիքի ձեռքբերմանը, ընկալմանը, գործնական կիրառությանը, ընդհանուր մտածողության զարգացմանը:
- Ընդհանուր գիտելիքների, կարողությունների ստուգման թեստեր, որոնք ընդգրկում են բազմակողմանի, կարող են ներառել ուսումնական ծրագրերի մի քանի տարվա նյութ:
- Ավարտական և բուհական թեստեր, որոնք ընդունելության համար է նախատեսված, հետևաբար հանձնարարվում է ուսումնական գործընթացի ավարտին կամ նոր՝ ավելի բարձր ուսումնական գործունեություն սկսելուց առաջ:
- Հայտորոշիչ թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և հետագայում ուսուցման որակը բարելավելու նպատակով:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է պարզել դասավանդած ուսումնական նյութի կամ հմտության յուրացման մեջ աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները:

Հայտորոշիչ աշխատանքները հնարավորություն են ստեղծում՝

1. Ճշգրտելու յուրաքանչյուր սովորողի հետ տարվող անհատական աշխատանքը, բովանդակությունն ու ծավալը, խթանելու նրա ուսումնական ակտիվությունը:
2. Հայտորոշելու ուսուցման ընթացքն ու արդյունքները:
3. Շաղկապելու ուսուցումն ուսումնառության հետ:
4. Ապահովելու փոխադարձ կապը, սովորողի, նրա ծնողի հետ:
5. Հաշվառելու մեկնարկային վիճակի նկատմամբ սովորողի առաջադիմության ընթացքը:
6. Վերահսկելու ուսումնական գործընթացն ու արդյունքները:

Թեստը կազմելիս ստուգվում է սովորողների ստացած գիտելիքների քանակն ու որակը, դրանց ընկալումը, կիրառելու և վերլուծելու, համադրելու և գնահատելու կարողությունները:

ԳԼՈՒԽ 1.Թեստ: Թեստի տեսակները

Թեստը սովորողների գիտելիքներն ու հմտությունները ստուգելու և գնահատելու միջոց է: Դրանք կիրառվում են ուսումնական նյութի յուրացման և իմացության, ինչպես նաև որոշակի կարողությունների ձևավորման համար:

Թեստը առաջադրանք է, որը հնարավորություն է տալիս արագ բացահայտել և գնահատել հոգեբանական որոշակի որակների զարգացման աստիճանը, ինչպես նաև գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը:

Թեստ տերմինը առաջին անգամ օգտագործել է ամերիկացի հոգեբան Զ. Կետելլիումը 1890 թ-ին:

Թեստ բառը առաջացել է անգլերեն test բառից, որը լայն իմաստով նշանակում է փորձ, փորձարկում, հետազոտում:

Մանկավարժական թեստը թեստային առաջադրանքների համակարգ է, որը ունի բարձրության աստիճաններ՝ աշակերտների գիտելիքների հմտությունների և կարողությունների օբյեկտիվ գնահատման համար:

Ըստ նպատակադրման թեստերը լինում են՝

1. Առաջադիմության, որոնք հանձնարարվում են նյութի ամփոփման ժամանակ: Յուրաքանչյուր կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին:
2. Հայտորոշիչ թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և հետագայում ուսուցման որակը բարելավելու նպատակով:
3. Ուսուցողական կամ ձևավորող թեստեր, որոնք օժանդակում են գիտելիքի ձեռքբերմանը, ընկալմանը, գործնական կիրառությանը, ընդհանուր մտածողության զարգացմանը:
4. Ընդհանուր գիտելիքների, կարողությունների ստուգման թեստեր, որոնք ընդգրկում են բազմակողմանի, կարող են ներառել ուսումնական ծրագրերի մի քանի տարվա նյութ:

Թեստի վերջին տեսակը ավարտական և բուհական ընդունելության համար է նախատեսված, հետևաբար հանձնարարվում է ուսումնական գործընթացի ավարտին կամ նոր՝ ավելի բարձր ուսումնական գործունեություն սկսելուց առաջ:

Ցանկացած ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է առաջին հերթին գիտելիքների որակի ստուգմամբ և

գնահատմամբ: Էլեկտրոնային և առցանց ուսուցման պարագայում լայնորեն օգտագործվում է գիտելիքների ավտոմատացված ստուգումը, որն ապահովում է ստուգման ճկուն և զարգացած ձևերի կիրառում:

Կրթական համակարգում կիրառելով թեստավորման համակարգչային տեխնոլոգիաները, թեստերն օգտագործվում են ընդունելության քննությունների անցկացման գործընթացներում: Քննությունների համակարգչային թեստավորման ձևը թույլ է տալիս ստուգել տվյալ առարկայից ունեցած գիտելիքները և ապահովում է գնահատականների օբյեկտիվությունը: Համակարգչային թեստավորման և գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը մեծապես կախված է թեստերի բովանդակությունից և որակից:

Թեստերի կազմման գործընթացում գոյություն ունեն ճանաչողական չորս մակարդակներ՝

- Առաջին մակարդակում տեղի են ունենում ինֆորմացիայի ընկալումը, ծանոթացում առարկայից: Նրա նպատակն է օբյեկտների, երևույթների ճանաչումը:
- Երկրորդ մակարդակում կատարվում է ոչ միայն ինֆորմացիայի ընկալումը, այլև նրա մեխանիկական արտապատկերումը, որի նպատակն է ստացված ինֆորմացիայի փոխանցումը, վերապատմումը:
- Երրորդ մակարդակում ինֆորմացիան ընկալվում, արտապատկերվում, վերլուծվում, գիտակցվում է և դրա հիման վրա ընդունվում:

  Երրորդ մակարդակի նպատակն է ստացված գիտելիքների գործնական կիրառումը զանազան իրավիճակներում:
- Չորրորդ մակարդակում ստացված գիտելիքները ոչ միայն կիրառվում են, այլև դրանց հիման վրա ստեղծվում են նորերը:

  Չորրորդ մակարդակի բնորոշ հատկանիշը նոր գիտելիքի ստեղծագործական վերարտադրումն է:

  Ճանաչողական գործունեության մակարդակներին համապատասխան կարելի է առանձնացնել ստուգիչ առաջադրանքների չորս տեսակ:
- Առաջին տեսակին պատկանում են այն առաջադրանքները, որոնք օժանդակում են ինֆորմացիայի յուրացումը ծանոթության մակարդակում:

  Օրինակ առաջադրանքը պահելու երաշխիքային ժամկետը:
- Երկրորդ տեսակին պատկանում են այն առաջադրանքները, որոնք ենթադրում են սովորողի կողմից ինֆորմացիայի յուրացումը և վերարտադրումը պարզ տրամաբանական գործողությունների մակարդակով:

- Երրորդ տեսակին պատկանում են այն առաջադրանքները, որոնք ինֆորմացիայի յուրացման համար պահանջում են համեմատաբար բարդ տրամաբանական գործողություններ:
- Չորրորդ տեսակը պրոբլեմային առաջադրանքներն են, որոնք զարգացնում են արդյունավետությունը և ստեղծագործական գործունեությունը:

Կարևոր է իմանալ թե սովորողը ինչպես է հանգել այս կամ այն լուծմանը, պարզել նրա դատողությունների ընթացքը և ծանոթանալ նրա կատարած ենթադրություններին: Այսպիսով պրոբլեմային առաջադրանքների կատարման և գնահատման համար օգտագործում են հիմնականում գրավոր աշխատանքներ:

Պրոբլեմային առաջադրանքների թեստային ձևով մշակումը և սովորողների ունակությունների ստուգման ավտոմատացումը բարդ գիտամեթոդական պրոբլեմ է, որի լուծման ճանապարհներից մեկը համակարգչային խաղերի օգտագործումն է:

Իսկ ինչպիսի՞ն պետք է լինեն թեստային առաջադրանքները. գրավոր և բանավոր ստուգարքների և քննությունների ժամանակ օգտագործվող հարցերը և խնդիրները չեն կարող առանց փոփոխության կիրառվել թեստերի մեջ: Դրանց համար մշակվում են հատուկ առաջադրանքներ թեստային ձևով:

Ըստ սովորողի կողմից կատարվող գործողությունների բովանդակության առաջադրանքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- մեկ պատասխանի ընտրությամբ,
- մի քանի պատասխանի ընտրությամբ,
- առաջարկվող տարրերի նպատակային դասավորման,
- բացթողումների լրացման

Տեղադրման՝

- պատասխանը կազմելու,
- պատասխանը հաշվելու:

Թեստային առաջադրանքները կարող են լինել՝ հարցական, հաստատողական, տեքստային, աղյուսակային, գրաֆիկական և այլն:

Թեստային առաջադրանքների ձևի ընտրությունը կախված է ուսումնական գիտելիքների ընթացիկ ստուգումից, համակարգչային թեստավորման հնարավորություններից և այլն: Սովորաբար առավելություն են տալիս առաջադրանքների այն ձևերին, որոնց մեջ ճիշտ պատասխանը գուշակելու հավանականությունը մոտ է կամ հավասար է զրոյի:

Մշակված թեստային առաջադրանքները պետք է ապահովեն սովորողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը, հուսալիությունը:

Թեստային առաջադրանքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

- պահանջը՝ այսինքն առաջադրանքը պետք է պարունակի ուսումնական առարկային վերաբերող հարցեր, բովանդակության տրամաբանական ճշտություն:
- լոկալ անկախություն
- արդյունավետություն և այլն:

Թեստային առաջադրանքները գնահատվում են կոնկրետությամբ և վերացականությամբ, ընթերցման խորությամբ և գիտելիքների լրիվությամբ:
Առաջադրանքը պետք է լինի հասկանալի և հնարավորինս կարճ: Առանց փորձնական ստուգման առաջադրանքը չի կարող լինել թեստային: Առաջադրանքի դժվարությունը հիմնականում կախված է նրա բովանդակությունից և ձևից:

Թեստային առաջադրանքներում կարող են լինել տարբեր քանակությամբ և հարաբերությամբ ճիշտ և սխալ պատասխաններ: Խորհուրդ չի տրվում բերել բացահայտ ոչ ճիշտ պատասխաններ, որոնք սովորողը միանգամից կճանաչի: Պատասխանների ոչ ճիշտ տարբերակները պետք է լինեն ճշմարտանման:
Լավագույն է համարվում մեկ տող զբաղեցնող կարճ պատասխանը:

Երկու երեք մեծ տեքստը խորհուրդ չի տրվում: Առաջադրանքներում բառերի տողադարձ նույնպես խորհուրդ չի տրվում:

Թեստային առաջադրանքներին ներկայացվող պահանջներից մեկը պատասխանի համար անհրաժեշտ ինֆորմացիայի նվազագույն ծավալն է առանց իմաստի կորստի: Ավելորդ մանրամասնումը, ավելորդ բառերը, նիշերը, սովորողի ուշադրությունը շեղում են հիմնական ընկալելուց:

Տեքստի տարրերի վատ դասավորությունը, անխնամ պատկերազարդումը, համընդհանուր ճանաչում չունեցող հապավումների օգտագործումը դժվարացնում են ինֆորմացիայի ընկալումը: Գիտելիքների ավտոմատացված ստուգման առաջադրանքները կազմվում են՝ հաշվի առնելով համակարգչային թեստավորման համակարգի սահմանափակումները:

Թեստային առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի կարդացած դասախոսությունների նյութին, առաջարկվող դասագրքերին, սովորողներին հասու ուսումնա-մեթոդական նյութերին: Թեստեր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական նյութի բովանդակության ընտրության հետևյալ սկզբունքները.

- Գիտելիքների առավել կարևոր, հիմնական տարրերի ընտրությունը:

Գիտական արժանահավատությունը (խորհուրդ չի տրվում թեստի մեջ մտցնել վիճելի տեսակետներ):

- Բովանդակության լրիվությունը և ստուգման համար բավարար լինելը:
- Թեստի բովանդակության փոփոխման հնարավորությունը կապված ուսումնական առարկայի բովանդակության փոփոխությունների հետ:
- Աճող դժվարությունը (թեթև առաջադրանքներից, որոնք ճիշտ կատարում է սովորողների մեծ մասը, մինչև ամենադժվարները):

Հայտնի է, որ անհնարին է միևնույն թեստով ճիշտ որոշել տարբեր պատրաստվածության աստիճան ունեցող սովորողների գիտելիքները: Դրա համար էլ հաճախ թեստերը մշակում են պատրաստվածության միջին մակարդակ ունեցող սովորողների գիտելիքները ստուգելու համար:

Այսպիսով, կրթական համակարգում կիրառելով թեստավորման համակարգչային տեխնոլոգիաները, կարող ենք ասել, որ դրանք բարձրացնում են գիտելիքների գնահատման գործընթացի արդյունավետությունը, գիտելիքների ստուգման այլ ձևերի նման բացահայտում են բացերը և խրախուսում ուսուցումը, ինչպես նաև ապահովում են հետադարձ կապ ուսուցման որակի հետ:

Թեստերը ընդհանրապես պարունակում են վարժությունների և առաջադրանքների հետևյալ տեսակները՝

- Բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ:
- Կարճ պատասխաններ պահանջող հարցադրումներ:
- Ստեղծագործական բնույթի կամ ընդարձակ պատասխան պահանջող հարցադրումներ:
- Համապատասխանեցման առաաջադրանքներ:
- Բազմակի ընտրությամբ հարցեր (3, 4 կամ 5 տարբերակ, որից մեկն է ճիշտ):

Ելնելով այս հարցարանի նպատակներից ընտրել ենք առաջին երկու տեսակները.

Օրինակ՝ համապատասխանեցման

Ո՞ր բառը հոմանիշ չէ նշվածին.

Մաքուր

ա. Վճիտ

բ. Ականակիտ

գ. Պարզ

դ. Բյուրեղապակի

Բազմակի ընտրությամբ հարցերը համեմատաբար ավելի շատ են՝

Օրինակ՝

Ո՞ր դեպքում է դարձվածքի իմաստը սխալ բացատրված:

- Ականջները կախել – ուշադիր, լարված լսել:
- Գլուխ բարձրացնել – ապստամբել, ըմբոստանալ:
- Թակարդ լարել – դավ դնել:
- Ոգի առնել – վրեժ լուծել:

Թեստը կազմելիս ստուգվում է սովորողների ստացած գիտելիքների քանակն ու որակը, դրանց ընկալումը, կիրառման և վերլուծելու, համադրելու և գնահատելու կարողությունները:

Թեստը կազմված է լինում ստուգողական հանձնարարություններից և այդ հանձնարարությունների ճիշտ պատասխաններից:

Թեստի առավելություններն են՝

- օբյեկտիվ գնահատական
- արագ և որակյալ գնահատում
- էֆեկտիվ և համընդհանուր ստուգում
- արդյունքների վերլուծության լայն հնարավորություն:

Թեստերը ըստ կազմության քանակի լինում են՝

- մինչև 20 առաջադրանք
- 20-500 առաջադրանք
- 500 և ավելի առաջադրանք

Թեստային առաջադրանքի ձևերը կարող են լինել՝

- փակ տիպի առաջադրանքներ, որտեղ աշակերտները ընտրում են ճիշտ պատասխանը տրված առարկաներից: Փակ տիպի թեստային առաջադրանքները պարունակում են հիմնականում առաջին և երկրորդ բարդության աստիճանի հարցեր, որտեղ տրված է մեկ ճիշտ պատասխան:

  Օրինակ՝ընտրել տվյալ առաջադրանքների ճիշտ պատասխանը.

  100-60:2.3=

  1.60

  2.10

  3.90
- Բաց տիպի առաջադրանքներ, որտեղ աշակերտը պետք է ինքնուրույն ձևակերպի առաջադրանքի պատասխանը: Բաց տիպի թեստային առաջադրանքների առավեությունը կայանում է նրանում, որ այնտեղ չկան ճիշտ պատասխաններ և աշակերտը ինքն է ձևակերպում պատասխանը: Այս առաջադրանքները ևս կարող են լինել առաջին և երկրորդ աստիճանի բարդության:

Օրինակ՝լրացնել բաց թողնվածը.

Հանկարծ պարիսպների վրա-------Այծեմնիկի---------աղջիկների գունդը:

- Առաջադրանքների համապատասխանեցում, որտեղ աշակերտը համապատասխանեցնում է առաջադրանքները միմյանց հետ: Այս առաջադրանքներում աշակերտը համապատասխանեցնում է դեպքերը, իրադարձությունները, թվերը և առաջադրանքները, որը նույնպես կարող է լինել առաջին և երկրորդ աստիճանի բարդության:

Օրինակ՝Համապատասխանեցնել

Դաս	թերթ
Գրի	ման
Գրիչ	տախտակ
Օր	մատյան

Առաջադրանքների ճիշտ հերթականություն, որտեղ աշակերտները դասավորում են առաջադրանքները ճիշտ հերթականությամբ: Այս առաջադրանքները հիմնականում համարվում են երկրորդ աստիճանի բարդության, որտեղ աշակերտները առաջադրանքները դասավորում են ճիշտ հերթականությամբ:

Օրինակ՝ Դասավորել շաբաթվա օրերը ըստ հերթականության.

1. Չորեքշաբթի
2. Ուրբաթ
3. Հինգշաբթի
4. Շաբաթ
5. Երկուշաբթի
6. Կիրակի
7. Երեքշաբթի

- Առաջադրանքի պատասխանի շարադրում, որտեղ աշակերտը ինքնուրույն շարադրում է, վերլուծում և կատարում եզրահանգումներ: Այս առաջադրանքները կարող են լինել երկրորդ և երրորդ աստիճանի բարդության, որտեղ աշակերտները շարադրում են իրադարձություններ, կատարում են համեմատություն, վերլուծություն, ինքնուրույն եզրահանգում:

Օրինակ՝ Համեմատել Սասունցի Դավթի և Վարդան Մամիկոնյանի կերպարները:

Թեստը պետք է պարունակի հետևյալը.

- Ինչ պետք է անի աշակերտը
- Հարց
- Հարցի պատասխան

- Գնահատական

Առաջադրանքները պետք է լինեն հստակ ձևակերպված, գրագետ, կարճ և հասկանալի, առանց անհասկանալի կամ խճճող բառերի և առանց պնդման կամ ժխտման առաջադրանքներ չպետք է լինեն:

Թեստի կազմված հիմնական պահանջները

- Թեստային առաջադրանքը պետք է անդրադառնա թեմայի բուն նպատակին:
- Թեստային առաջադրանքը պետք է մատչելի և հասկանալի լինի:
- Թեստը պետք է կազմված լինի այնպես, որ աշակերտը կարիք չունենա ուշադրություն դարձնել երկրորդական առաջադրանքներին:
  Տերմինների բացատրությունը պետք է լինեն ուսումնական նյութերից, այլ ոչ թե այլ աղբյուրներից:

ԳԼՈՒԽ 2.Թեստ կազմելու սկզբունքները

Թեստը հարց է կամ առաջադրանք, կամ որոշակի նպատակով բարեխղճորեն ընտրված հարցերի կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունն:

Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Առանց նպատակի հստակեցման՝ թեստը հիմնականում վերածվում է առաջադրանքների անհասկանալի մի համախմբի:

Ուսումնական նպատակի մասին խոսելիս՝ տեղին է հիշել Սենեկայի «Եթե մարդը չգիտի, թե դեպի որ նավահանգիստն է նավարկում, ապա նրա համար ոչ մի քամի էլ նպաստավոր չէ» ասացվածքը:

Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքը, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը:

Թեստի նպատակն է՝ պարզել, թե աշակերտը որքանով է յուրացրել ուսումնական նյութը: Արդյունքներն օգտագործվում են միավորային գնահատման կամ հայտորոշման նպատակով: Ըստ նպատակի, ընթացիկ գնահատման թեստը կարող է լինել.

1. առաջադիմության ստուգման թեստ, որը տրվում է կիսամյակի կամ յուրաքանչյուր թեամայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար:

2. հայտորոշիչ, որը տրվում է պարբերաբար հայտորոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով:
3. տեղակայման թեստ, որը տրվում է դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու՝ ըստ իրենց գիտելիքի և կարողությունների:

Թեստերն անպայմանորեն ազդում են ուսուցման ամբողջ գործընթացի վրա: Այսպիսի ազդեցությունը կոչվում է թեստի հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական կամ բացասական: Թեստերի դրական ազդեցությունն ուսուցման վրա գլխավորապես պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Եթե այն ընդգրկուն է և արտացոլում է իրապես ուսուցանված և սովորողների կողմից ընկալված նյութերը, ապա թեստի ազդեցությունը համարվում է դրական, իսկ եթե թեստը բացասաբար է անդրադառնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է:

Թեստը կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ:

- Թեստը պետք է լինի հուսալի կամ արժանահավատ: Հուսալի նշանակում է ստուգման և գնահատման հաստատունություն: Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում, կամ միաժամանակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները: Այսպիսով, թեստերի հուսալիության հետ կապված քննարկման են ենթակա երկու հիմնական մեթոդաբանական խնդիրներ՝ ժամանակը և բովանդակությունը:

Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ: Այդտեղ բացահայտ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորի առաջադրանքները կատարող աշակերտը: Գնահատման չափանիշները հնարավորինս պետք է ստանդարտեցված լինեն: Կատարված աշխատանքի արդյունքներն ստուգվում են գնահատման կամ հետազոտման և ուսուցման նպատակով:

Թեստի արդյունքներն ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնական որակներ կամ ձեռքբերումներ ստուգելու համար: Լավագույնը թեստը միայն մեկ նպատակի համար նախատեսելն է:

- Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է: Հավաստիությունն այն ցուցիչն է, որով, փաստերի ու տեսության միջոցով, կարելի է մեկնաբանել թեստի գնահատականները՝ նախատեսված նպատակով այն օգտագործելու տեսանկյունից:

Թեստի հավաստիությունը նպատակին ծառայելն է: Օրինակ. ինչ արժեք կունենան մեր ջանքերը, եթե հասնենք կայարան՝ գնացքի մեկնումից թեկուզ մեկ րոպե ուշացումով:

Թեստի արժևորման և կատարելագործման համար առավել հիմնարար բնութագրիչ է հավաստիությունը, քանի որ այն իր նշանակությամբ բացարձակ որակ է, որով արժևորվում և որակապես բարելավվում է թեստը:

Թեստի արդյունքում ստացված թվանշաններն ինքնին այնքան հետաքրքրական չեն, որքան դրանց ինչ-որ բնութագրիչներով օժտված լինելը և այն, թե դրանց մեկնաբանություններից ինչ հետևություններ են արվում սովորողների, սովորելու, դասավանդման, կրթակարգի, չափորոշիչի և ծրագրերի մասին:

- Թեստը պետք է լինի իրագործելի թե՛ մարդկային ռեսուրսների, թե՛ֆինանսական, թե՛տեխնիկական, և թե՛ժամանակի առումներով:
- Թեստը պետք է լինի արդյունավետ: Արդյունավետ թեստ նշանակում է՝ նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով ապահովել առավելագույն արդյունք: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ:

Թեստի արդյունավետությունը կարելի է որոշել նաև՝ համադրելով թեստի դժվարության աստիճանը թեստավորվողի պատրաստվածության մակարդակի հետ: Թեստն արդյունավետ է, եթե բարդության աստիճանը համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ ոչ էլ շատ դժվար լինի: Այն պետք է լինի միջին բարդության:

Թեստում ընդգրկված յուրաքանչյուր առաջադրանք պետք է օգնի չափման գործընթացին՝տարբերակելով սովորողների ունակությունները: Թե այդ իմաստով որքանով է ճշգրիտ տվյալ առաջադրանքը, որոշվում է թեստաբանության տեսությունից հայտնի ձևերով:

Թեստերում ընդգրկվող հարցերի ու առաջադրանքների տեսակները սահմանված են ‘Թեմատիկ աշխատանք’ վերնագրի տակ:

Թեստը կիրառելուց առաջ օգտակար կլինի դրա զննումը հոգեբանական տեսանկյունից՝հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 3.ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ հայտորոշմամբ:

Հայտորոշման դերը բարձր է ուսումնական աշխատանքներում, եթե որակյալ արդյունք է ակնկալվում:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Կախված այն բանից, թե ինչը ինչ ծավալով և խորությամբ է անհրաժեշտ հայտորոշել, կարելի է օգտագործել տարբեր միջոցներ: Հայտորոշման նպատակով կարելի է օգտագործել նաև բանավոր կարճ կամ ֆրոնտալ հարցադրումներ:

Ճիշտ հայտորոշումն այն կարևոր նախապայմանն է, որով դժվար չի լինի գտնել աշակերտի թերությունները վերացնելու միջոցներ և ընտրել ուսուցման արդյունավետ մեթոդներ:

Հայտորոշիչ ստուգման ձև կարող է լինել նոր դասը բացատրելուց անմիջապես հետո դրա յուրացման աստիճանի ստուգելը: Հայտորոշիչ ուսումնասիրություններ պետք է արվեն յուրաքանչյուր նոր դասից հետո, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում:

Ուսուցանող գնահատման առանձնահատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը:

Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են.

- կարճ ժամանակի համար է, արագ է,
- որոշակի է,
- արագ է ստուգվում և արժևորվում,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է,
- արդյունքները հեշտ վերլուծելի են,
- արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարող ենք որոշել աշակերտների հետ հետագա անելիքները:

Հայտորոշիչ թեստը չի նախատեսվում օգտագործել հաշվետվության նպատակով, այլ այն ունի սովորողի հետ հետադարձ կապի միջոցով ուսումնական նյութի յուրացման

աստիճանը բարձրացնելու նպատակ: Այդ պատճառով հայտորոշիչ թեստի գնահատման մոտեցումներն էապես տարբեր պետք է լինեն մրցակցային բնույթի թեստերի արդյունքների գնահատումից: Հայտորոշիչ թեստի արդյունքները սովորաբար միավորով չեն գնահատվում, դրա արդյունքներն ուսուցիչը վերլուծում, մեկնաբանում և քննարկում է՝ ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր սովորողի հետ:

Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողնվածը լրացնելու պահանջով,
- ստեղծագործական մոտեցում պահանջող կամ դրանց համադրմամբ

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն:

Այս գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային սանդղակով:

Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բարձրացնելու նպատակով:
Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է նաև լինել բանավոր կամ գործնական: Կարելի կիրառել նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքներ:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն:

Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային սանդղակով: Եթե գնահատման համար ընտրվում է այլ սանդղակ, ապա պաշտոնական գրանցման համար այդ սանդղակով ստացված միավորները պետք է բերել 10 միավորային սանդղակի՝ օգտվելով համապատասխան բանաձևից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեստ, թեստի տեսակները, հայտորոշիչ թեստ թեման կատարեցինք հետևյալ եզրակացությունը:

Թեստը մի այնպիսի առաջադրանք է, որը հնարավորություն է տալիս արագ բացահայտել և գնահատել հոգեբանական որոշակի զարգացման աստիճանը, ինչպես նաև գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը: Թեստավորման ձևը թույլ է տալիս ստուգել տվյալ առարկայից ունեցած գիտելիքները և ապահովում է գնահատականի օբյեկտիվությունը:

Առաջադրանքները պետք է լինեն հստակ ձևակերպված, գրագետ կարճ և հասկանալի, առանց անհասկանալի կամ խճճող բառերի և առանց պնդման կամ ժխտման առաջադրանքները չպետք է լինեն:

Ուսուցանող գնահատման առանձնահատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Դրա ուսումնառությունը:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերությունները և սխալները:

Այսպիսով, ուսուցիչը ճիշտ հայտորոշելու դեպքում հնարավորություն կստանա յուրաքանչյուր աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու և օգնելու նրան առավել կարճ ժամանակահատվածում հաղթահարելու ուսման մեջ հանդիպող դժվարությունները: Սա էլ իր հերթին դառնում է յուրատեսակ նախապատրաստական աշխատանք՝ գիտելիքների ստուգման դասերին առավել պատրաստ ներկայացնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ. Միքայելյան: Ընթացիկ գնահատման նոր համակարգը, որպես կրթության որակի բարելավման խթանելու ուսուցչի ձեռնարկ: Երևան 2010 թ.

2. Օնիկ Միքայելյան, Սոնա Միքայելյան: Թեստ. կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքների ձեռնարկ: Երևան 2015 թ. , Զանգակ հրատարակչություն

3. Սիրամարգ Վարդումյան, Նինա Ջազինյան, Լիլիթ Հարությունյան, Գարի Վարելլա: Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, մեթոդներ, գնահատման ձեռնարկ: Երևան 2005 թ. , Նոյան տապան հրատարակչություն